խախտմամբ ներկայացված բոլոր ապացույցները հանում է հետազոտման ենթակա ապացույցների շարքից:

Գործով հայցվորի կողմից վկայակոչված բոլոր փաստերը դատարանը համարում է հաստատված, որպիսի պայմաններում ՀՀ ՆԳՆ քարտուղարի՝ 09.11.2023թ. «Անուշ Էդվարդի Պետրոսյան» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումը ենթակա է անվավեր ճանաչման:

Այսպիսով դատարանը գտնում է, որ հայցը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

ՀՀ քաղաքացիական դատավարության 234.12-րդ հոդվածի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

<u>Դատական ծախսեր.</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Անդրադառնալով պետական տուրքի գումարին, և նկատի ունենալով, որ հայցվորը նախապես վճարել է պետական տուրքը, դատական ծախսերի պահանջ չի ներկայացրել, ուստի գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը.

ՎՃՌԵՑ

Հայցը բավարարել.

Անվավեր ճանաչել պատասխանող ՀՀ ՆԳՆ քարտուղարի՝ 09.11.2023թ. «Անուշ Էդվարդի Պետրոսյան» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումը:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԴԱՏԱՎՈՐ **Գ. ՄԱՋՄԱՆՅԱՆ**

Ծանոթություն. Վճիռն օրինական ուժի մեջ է մտել՝ 29.01.2024թ.:

ԴԱՏԱՎՈՐ **Գ. ՄԱՋՄԱՆՅԱՆ**